ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 02/9/2414-16 "25" 05 2016 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի մայիսի 17-ի, թիվ 286-ի 1 գրության՝ հայտնում ենք, որ տեղեկատվություն ստանալու հարցումները նախարարության «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգ են մուտքագրվում «ՀՀ մշակույթի նախարարության գործավարության կարգը հաստատելու մասին» ՀՀ մշակույթի նախարարի 2010 թվականի մայիսի 3-ի N 220-Ն հրամանի համաձայն՝ ընդհանուր հիմունքներով: Փաստաթղթաշրջանառության համակարգում դրանք առանձնացվում են «փաստաթղթի բնույթ» տողով: Աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժին առաքված հարցումները տեսակավորվում են ըստ ոլորտների և հարցման ձևերի /գրավոր, բանավոր/:

Համաձայն՝ «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժինը վարում է տեղեկատվություն տնօրինողի հարցումների գրանցամատյան՝ վիճակագրություն և ամփոփ տվյալներ մշակելու նպատակով:

Հարգանքով

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ
ОБЩИЙ ОТДЕЛ

Հասարակայնության հետ կապերի բաժին՝
Կատ.՝ Ա. Սերոբյան
Հեռ.՝ 011-56-45-46

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,
Республика Армения, Ереван 0010, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2,
Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010, Republic of Armenia
Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am